

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԱՅԱՆԵ ԽԱԼԱԹՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Մանկ. գիտ. թեկն., պրոֆեսոր
gayane.khalatyan.1958@mail.ru

ԹԱԳՈՒՀԻ ԱՂԱՍՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Բանասիրական ֆակուլտետի
4-րդ կուրսի ուսանող
aghasyantaguhi-1@aspu.am

**ՄՈՒՇԵՂ ԳԱԼՇՈՅԱՆԻ «ՁԵՌՆՔԱՇ ՀԵՐՈՆ» ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ
ԲԱՌԱՊԱՇՏԱՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Ամփոփում

Հոդվածում կատարել ենք Մ. Գալշոյանի «Ձեռնքաշ Հերոն» պատմվածքի բառապաշարի տարբեր շերտերի քննություն՝ համագործածական, ժողովրդախոսակցական, բարբառային բառաշերտերի բառեր, բարբառներին անցած փոխառություններ, օտարաբանություններ, դարձվածքներ, բարդությունների տարբեր տեսակներ, կոչականներ, ձայնարկություններ, որոնք խոսքաշարին հաղորդում են պատկերավորություն, հուզարտահայտչականություն և ոճական մեծ լիցքեր: Վերոնշյալները քննել ենք ինչպես հեղինակի, այնպես էլ կերպարների խոսքում: Առավելաբար կարևորել ենք կերպարների խոսքի անհատականացումը նրանց բառապաշարի միջոցով:

Բանալի բառեր և արտահայտություններ. Բարբառային բառեր, գրողի ոճ, դարձվածային միավորներ, կերպարի անհատականացում, փոխառյալ բառեր, բարդություններ:

Ներածություն

Մ. Գալշոյանի «Ձեռնքաշ Հերոն» պատմվածքի բառապաշարը բազմաշերտ է:

Ստեղծագործության բառապաշարի հիմքը կազմում են բարբառային բառերը: Էրգրի լեզուն գործածելով՝ հեղինակը ողջ խորքայնությամբ ներկայացնում է ժողովրդական մտածողությունը: Նկատենք, որ հեղինակը իր խոսքում ևս գործածել է ժողովրդախոսակցական և բարբառային բառեր, որով նա մոտենում է ժողովրդի լեզվամտածողությանը:

Մեր նպատակն է դիտարկել բառապաշարի բոլոր շերտերի պատկերավոր դրսևորումները:

Մեթոդաբանությունը

Աշխատանքը իրականացնելիս օգտվել ենք հայ լեզվաբանական գրականության մեջ ընդունված և ավելի հաճախ կիրառվող բառակազմական վերլուծությունների, նկարագրական, համեմատական, ռճաբանական մեթոդներից:

Երկի գեղարվեստական կատարելության չափանիշը բազմաթիվ գործոններից զատ կապված է արտահայտչամիջոցների ամբողջության, բառապաշարային և լեզվական համակարգերի, կառուցվածքի, գրողի լեզվի և ոճի հետ: Հետևաբար գեղարվեստական գրականության ուսումնասիրությունն անհնար է դառնում առանց վերը նշված հիմունքների: Ահա ինչու դարեր շարունակ գեղարվեստական գրականություն ստեղծող և նրա ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետներն անդրադառնում են նաև գրողի լեզվառճական առանձնահատկություններին՝ գրողին գնահատելով նաև այդ տեսանկյունից, այլ խոսքով՝ ձևի և բովանդակության միասնականության մեջ:

Գալշոյանի գեղարվեստական մտածողության բնույթը լավագույնս ընդգծվում է դիպաշարաստեղծ հնարքների ընտրության գործում. այստեղ էլ հենց գոյավորվում է գալշոյանական գերերևույթը¹:

Մուշեղ Գալշոյանը հրաշալի գիտեր Սասունի բարբառը, գաղթական սասունցիների հոգեբանությունը, երագանքները և իր պատմվածքներում ստեղծեց սասունցիների տպավորիչ կերպարներ՝ հմտորեն օգտագործելով բարբառի հնարավորությունները: Անդրադառնալով դիտարկվող պատմվածքում տեղ գտած ժողովրդախոսակցական բառերի ռճական դրսևորումներին:

«Հարևանի **մաքագն** էլ սրբվելու վրա էր, բայց շաբաթ առաջ մի **քթոց** դարման տվեց» (էջ 96):

Մարագ- հարդ լցնելու տեղ, հարդանոց²:

Քթոց, Կթոց- 1. Բարակ ձյուղերից հյուսված կողով, սակառ: 2. Կաթ կթելու աման, կովկիթ³:

«-Ախպեր, **վալլահ**, իմ թաթմանն է» (էջ 99):

Վալլահ-մահմեդականների երդման բացականչություն՝ աստված վկա նշ⁴:

¹ Տե՛ս Զ. Երվանդյան, Ժամանակի գեղարվեստական կերպավորումը Մուշեղ Գալշոյանի ակնարկներում, Ե., 2016, էջ 140:

² Տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Ե., 1974, էջ 488:

³ Տե՛ս նշվ. բառարան, էջ 123:

«Դրա հերթամբալ մարդ էր» (էջ 103):

Թամբալ-աշխատել չսիրող, ծուլ⁵:

Պատմվածքում արժևորվում են հատկապես ժողովրդախոսակցական լեզվին անցած փոխառությունները: Մուշեղ Գալշոյանի «Ձեռնքաշ Հերոն» պատմվածքում հանդիպում ենք պարսկերենից, վրացերենից, թուրքերենից և այլ լեզուներից եկած փոխառությունների: Օրինակ՝ **թաթման**-վրաց. «ձեռնոց», **պինչ**-վրաց. «քթի ծակ, ոնգունք», **քարոզ**-ասոր. «մունետիկ, սուրհանդակ», **դանթար**-արաբ. «կենդինար» (հարյուրլիտրանոց կշիռ կամ հարյուրանոց ոսկի, արծաթ), **շալակ**-արաբ. «մուրացկանի տոպրակ» և այլն: Կիրառելով ժողովրդախոսակցական և բարբառային բառաշերտերի բառեր և բառաձևեր՝ հեղինակը անհատականացրել է ստեղծագործության կերպարներին: Հարկ է նշել, որ նրանք իրենց բառապաշարի տարբեր շերտերի կիրառմամբ խոսքաշարին հաղորդում են ոճական մեծ լիցքեր՝ ստեղծելով ժամանակի և միջավայրի բներանգ: Պատմվածքում հեղինակը կիրառել է նեղ բարբառային (զուտ գավառական) բառեր, որոնք հիմնականում Սասնա և Մշո բարբառներին են հատուկ, որոնցով խոսում են տվյալ գավառալեզուն ներկայացնող հերոսները:

«- **Ձեռնքաշ** Հերոն եկավ,- քչփչաց Անդրուշը, և ծիծաղը նորից պոթկաց» (էջ 96):

Ձեռնքաշ-1.Գողության հետամուտ: 2.Գող, որևէ բան գողացող⁶:

Ձեռնքաշ բառը գրական արևելահայերենում հոդակապով բարդություն է՝ ձեռնաքաշ:

Նման բառերը խոսքին հաղորդում են ոճական մեծ լիցքեր:

Գեղարվեստական ստեղծագործության արժեքը պայմանավորված է նաև տվյալ երկի հերոսների լեզվի անհատականացմամբ և ոճավորմամբ: Գեղարվեստական ստեղծագործության հերոսների խոսքի միջոցով արտահայտվում են որոշակի պատմական ժամանակաշրջանի բնորոշ գծերը, և այստեղ կարևոր նշանակություն է ստանում յուրաքանչյուր կերպարի լեզուն: Խոսքի ժողովրդայնությունը շատ դեպքերում համընկնում է կերպարի բնութագրման երևույթին: Պատմվածքի գլխավոր հերոսը Հերոն է: Հերոյի խոսքը շարադրված է պարզ ու ընկալելի. բարբառային բառերը հիշեցնում են, որ նա հավատարիմ է մնացել էրգրի լեզվին ու Սասնա բարբառին:

Հերոն նորից սայթաքեց՝ «**ուստից** գտա՞ր» (էջ 99):

⁴ Տե՛ս նշվ. բառարան, էջ 1351:

⁵ Տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, Ե., 2002, էջ 72:

⁶ Տե՛ս նշվ. բառարան, էջ 330:

Ուստի- 1.Հետևապես, ուրեմն, հետևաբար, այդ պատճառով: 2. Որտեղից⁷:
«Այդ սահնակներով ելնում էին **Մարաթուկ**, բարձում խոտն ու տերևը և **քանց** փոթորիկ իջնում գյուղ»(էջ 102):

Հերոն հիշում է, թե ինչպես էին տարիներ առաջ միասին ելնում Մարաթուկ: Մարութան սասունցիների սիրելի լեռն է, որի գագաթին՝ 2967 մ բարձրության վրա, կառուցված է Մարութա Սուրբ Աստվածածին վանքը, ինչի մասին պատմվում է «Մասնա ծոեր» էպոսում: Մարութա բառը մեզ է փոխանցվել ասորերեն maruta-«տերություն» բառից⁸:

Քանց- նխոր. քան գ..., քանըզ, ավելի քան⁹:

Չնայած իրեն ուղղված ծաղրի, Հերոն չի չարանում ոչ ոքի հանդեպ:

«-Անդրո ւշ, աստված քեզ **էվելի** շնորհք տա...» (էջ 104):

Էվելի- 1.Ավել, ավելի, 2. Ավելորդ¹⁰:

Գրողի լեզվի բառապաշարի ոճական առանձնահատուկ շերտերի մեջ կարևոր տեղ են գրավում օտարաբանությունները, որոնք ինչպես իրենց արտաքին ձևով, այնպես էլ գործածության բնույթով տարբերվում են փոխառյալ բառերից: Դրանք թեպետ գործածվում են գրականության մեջ, բայց չեն ձուլվում բառային կազմին, մինչդեռ փոխառյալ բառերի մեծ մասն այնպես է ձուլվել հայոց լեզվի բառապաշարին, որ այսօր համարյա չի էլ գիտակցվում նրանց փոխառյալ լինելը: Եթե օտարաբանությունների գործածությունը ընդհանուր գրական լեզվի մեջ խրախուսելի չէ, ապա գրականության լեզվի մեջ նույնիսկ անհրաժեշտ է, քանի որ ենթարկվում է գեղարվեստական որոշակի խնդիրների: Օտարաբանությունները գրողի լեզվում ունեն ոճական որոշակի արժեք և միջավայրի ու հերոսների խոսքի տիպականացման լեզվական կարևոր միջոցներ են:

«Մի **ավտո** ծղոտի եղածն ի՞նչ է, երբ ասես կբերեմ. հուսադրեց, էսօր-էգուց գցեց, բայց չբերեց»(էջ 96):

Ավտո- авто...<հուն. autos ինքը, բարդ բառի սկզբնամաս, որն իր իմաստով համապատասխանում է 1.«ինքնա...», 2.«ավտոմատիկ», 3.«ավտոմոբիլ», «ավտոմոբիլային» բառերին¹¹:

Մի ավտո (մեքենա) ծղոտ բառակապակցության մեջ **ավտո** բառը կիրառվել է կշռի, չափի իմաստով, ինչպես՝ մի գդալ շաքարավազ, երկու դույլ ջուր, հինգ տուփ ծխախոտ և այլն:

⁷ Տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Ե., 1980, էջ 610:

⁸ Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Ե., 1946, էջ 269:

⁹ Տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, Ե., 2012, էջ 105:

¹⁰ Տե՛ս նշվ. բառարան, էջ 30:

¹¹ Տե՛ս Ա. Հայրապետյան, Օտար բառերի բառարան, Ե., 2011, էջ 61:

«Օրն էն օրն էր, որ քու հեր, **մեշոկ** թնի տակ, կկանգներ իմ դռան» (էջ 103):

Մեշոկ- мешок 1. տոպրակ, պարկ, 2. սորուն նյութերի չափ՝ 3-5-փթանոց, 3.(մսնգ.) պարկ, 4.(փխբ.) դանդաղաշարժ, ծանրաշարժ, անշնորհք մարդ¹²:

«Այդ երեկո Հերոն **սկյամբիլ** խաղալու չգնաց... հավաքատեղին ձգում էր, բայց ինքն իրեն համոզեց, թե սկյամբիլ խաղալու ժամանակն արդեն անցնում է. գարուն է» (էջ 98):

Սկյամբիլ- թուրքերեն iskambil (թղթախաղ) բառից:

«Մարութա սա րն է իմ թիկունքին, ու ես չեմ բարձրանա իմ ժողված խոտն ու տերն բերի ու կերթամ **կոլխոզի** կալ» (էջ 102):

Կոլխոզ- колхоз < коллективное хозяйство, (պատմ.): ԽՍՀՄ-ում՝ գյուղացիական տնտեսության ձև, կոլտնտեսություն, կոլեկտիվ տնտեսություն¹³:

«Հերոն հանգիստ շունչ քաշեց, և սիրտն ուզեց տղերքի **ֆիլտրով** ծխախոտից ծխել» (էջ 103):

Ֆիլտր- фильтр < ֆր. filtre < նոր լատ. filtrum թաղիք, կաճ, 1. Հեղուկը քամելու՝ թորելու անոթ՝ նյութ են, քամիչ, պարզուտ, գտիչ: 2. (մսնգ.) Որևէ կարգի ճառագայթների՝ հոսանքի ևն արգելակման՝ խափանման սարք¹⁴:

Պատմվածքի բառապաշարը հարուստ է դարձվածքներով: Հեղինակը դարձվածքներին դիմում է տարբեր միտումներով՝ հերոսի հոգեկան աշխարհը ներկայացնելու, նրա ժողովրդային մտածելակերպը ցույց տալու, խոսքը հակիրճ ու տպավորիչ դարձնելու համար:

«Սայթաքել էր. թաթմանը պահակի ձեռքին տեսնելիս տեղնուտեղը պետք է **գլխի ընկներ**... դեռ իր մոտ մնացած թաքը ծրարեր... իսկ ինքը ի՛նչ արեց, տեսավ ու վռագ **տեք կանգնեց**» (էջ 99):

Կիրառված դարձվածքներից են՝ *այք գցել, հայացք գցել, ոտքը կախ գցել, փորը բռնել, հերն անիծել, մսուրներ կրծել, դարմանի մեջ ասեղ փնտրել, ականջ դնել, ականջի ետև գցել, լեզվի տակ ոսկոր չլինել, արյունը ջուր դառնալ* և այլն:

Գալշոյանը բարբառային մի շարք բառեր գործածում է որպես հերոսների դիմելաձև: Բարբառային բառերի միջոցով երբեմն Գալշոյանը արտահայտում է հերոսի վերաբերմունքը դիմացինի նկատմամբ¹⁵:

¹² Տե՛ս Ա. Ղարիբյան, Ռուս- հայերեն բառարան, Ե., 1977, էջ 489:

¹³ Տե՛ս նշվ. բառարան, էջ 290:

¹⁴ Տե՛ս նշվ. բառարան, էջ 623:

¹⁵ Տե՛ս Ռ. Սաղաթեյան, Բարբառային բառաշերտը արդի գրական արևելահայերենում, Ե., 2011, էջ 65:

Հերոսները այն բառերով, որոնցով դիմում են իրար, գնահատական են տալիս դիմացինին, միևնույն ժամանակ կարծիք ստեղծում ընթերցողի առաջ իրենց մասին:

«**Ռդում**», - ինքն իրեն ասաց Հերոն (էջ 99):

Հերոն ազնիվ գյուղացի է, որը իր սխալը ընդունելու արդյունքում իրեն տալիս է դդում անվանումը՝ փորձելով սաստել ու զգաստացնել իր անձը:

«-**Ախպեր**, վալլահ, իմ թաթմանն է» (էջ 99):

Հարկ է նշել, որ ախպեր բառը նշված խոսքային միջավայրում գործածված է վերաբերականի արժեքով:

«-Օիծաղե ք, **լառ**, - բարևի փոխարեն ասաց Հերոն»:

Լառ- (քրդ. lav) մանչ, տղա¹⁶:

Ճայնարկությունները մյուս խոսքի մասերից և իրենց կազմում մեկը մյուսից տարբերվում են առոգանությամբ, բացականչությամբ և գործածության այլ եղանակներով, որ արտահայտվում են խոսքաշարում որպես վերաբերմունք ստեղծող միջոցներ¹⁷:

«- **Հը մ**, թողե՛ք զիս - դիմացը կանգնած տղերքին հրեց մի կողմ» (էջ 104):

Հըմ- 1.Կարծիքը հայտնել չկամենալու բացականչություն: 2.Կռահելու, մտաբերելու բացականչություն¹⁸:

«-**Հա -հա -հա**, - ծիծաղեց Հերոն» (էջ 104):

Պատմվածքում կիրառվում են զարմանք, հեգնանք, հիացմունք, գայրույթ արտահայտող ձայնարկություններ՝ *հաա՛յ*, *ohhnn* , *յա՛*:

Բարբառային բառապաշարում զգալի թիվ են կազմում բարդությունները: Պատմվածքում տեղ են գտել ինչպես համադրական, այնպես էլ վերլուծական բարդություններ: Համադրական բարդությունները կազմվում են ինչպես պարզ, այնպես էլ բաղադրյալ հիմքերով: Պատմվածքում հանդիպում ենք **խշվաշ** (բամբակի չոր պատյան) բառով կազմված անվանական կրկնավոր բարդության:

« - Հա, **խշվաշ-մշվաշ**, - վայրահակ ու կոպկախ կրկնեց Հերոն» (էջ 98):

Պատմվածքում կիրառված անվանական վերլուծական հարադրություններից են *դես-դեն*, *էսօր-էգուց*, *կեսուրք-կեսկատակ*, *տուն-տնովի* և այլն:

Բարբառային բառապաշարը հարուստ է բայական հարադրություններով: Ժողովրդական մտածելակերպին շատ բնորոշ է հասկապես հարադրավոր բայերի առատությունը, որոնք բաղադրվում են

¹⁶ Տե՛ս Ս. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, Ե., 1944, էջ 189:

¹⁷ Տե՛ս Լ. Եզեկյան, Հայոց լեզու, Ե., 2007, էջ 317:

¹⁸ Տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, Ե., 2012, էջ 349:

բայով և որևէ այլ խոսքի մասի պատկանող բառով: Հարադրավոր բայերի հաճախական կիրառությունը պատմվածքում ժողովրդական մտածելակերպի վառ դրսևորումն է:

«Փառք- մի երեք օր կարելի է **յուլա գնալ**» (էջ 98):

Յուլա գնալ, 1.Մի կերպ ապրել, մի կերպ կառավարվել: 2. Մի կերպ համակերպվել, հաշտվել: 3. Եղածով բավարարվել, գոհ մնալ: 4. Լեզու գտնել, մի կերպ համաձայնության գալ: 5.Իր կարգով գնալ, պետք եղածի պես ընթանալ¹⁹:

Բարբառային բառապաշարում մեծ թիվ են կազմում զուգաբայական հարադրությունները:

«Ասենք, Հերոն չնայեց էլ. **գլուխ բարձրացնել-շուրջբուրդը նայել** չէր կարող, իր խոսքը խլվյալ շուրթերին, հայացքը կախ գնաց ու ծնկեց դարմանի շեղջի առջև» (էջ 97):

Ընդգծված զուգաբայական հարադրության բաղադրիչները արտահայտված են հարադրավոր բայերով, որոնց բաղադրիչները արտահայտում են իմաստային հաջորդականություն:

Զուգադրական բայերի բաղադրիչները հիմնականում արտահայտում են հոմանշային, հականշային և առնչակից հարաբերություններ: Թվարկենք պատմվածքում հանդիպած զուգաբայերից մի քանիսը՝ *ճարել-լցնել, անցնել-գնալ, թեքվել-գնալ, հանել-դնել, ժողվել-բերել, թողնել-հեռանալ, տանել-վաճառել, վերջանալ-գնալ, խոսել-ծիծաղել, քշել-տանել, տաքանալ-կպչել, տանել-դնել, բերել-կանգնեցնել* (գծիկի կիրառությունը հեղինակային է):

Խոսքին պատկերավորություն և ոճական լիցքեր են հաղորդում բաղիյուսական հարադրությունները:

«Կարելի էր ավելի սեղմել պարկը, իզուր շտապեց, ո՛չ Գևորն կար, ո՛չ **մարդ ու մուրդ**, պարկը պինդ սեղմած պետք է լիներ... » (էջ 98):

«**Դընգ ու դըհուլ** է, ու ես՝ անլուր» (էջ 101):

Պատմվածքում հանդիպած անվանական բարդությունների հիմնական մասը հոդակապով և անհոդական իսկական բարդություններ են, օրինակ՝ *գլուխկախ, վրազլուխ, վզակոթ, թնաթափ, անթատակ, փողպատ, մոլախոտ, շիտակաչք*:

«- Հա, խշվաշ-մշվաշ, - **վայրահակ ու կռակախ** կրկնեց Հերոն» (էջ 98):

Եզրակացություն

1. Պատմվածքի բառապաշարը քննելիս նկատեցինք, որ հեղինակի խոսքում հանդիպում են ոչ միայն գրական շերտին պատկանող

¹⁹ Տե՛ս նշվ. բառարան, էջ 117:

- բառեր, այլ նաև բարբառային բառեր, որով նա մոտենում է իր կերտած կերպարների խոսքին:
2. Պատմվածքում հերոսների խոսքում գերակշռում են ժողովրդախոսակցական և բարբառային շերտերին պատկանող բառերը: Դրանց ոճական դրսևորումները նպաստում են ստեղծագործության պատկերային համակարգի ավելի ազդեցիկ լինելուն:
 3. Կիրառված բառերից շատերը փոխառություններ են այլ լեզուներից, ինչպիսիք են պարսկերենը, վրացերենը, թուրքերենը, ասորերենը, արաբերենը և այլն: Դրանցից շատերը, խոսքում երկար ժամանակ կիրառվելով, ձուլվել են լեզվին: Ստեղծագործության մեջ կիրառվել են նաև օտարաբանություններ:
 4. Հեղինակը փորձ է արել հերոսների խոսքը անհատականացնելու նպատակով նրանց լեզվում կիրառել տարաբնույթ դարձվածքներ, որոնք ժողովրդական մտածողության արդյունք են:
 5. Կոչականների, ձայնարկությունների և վերաբերականների տեղին կիրառությունները ոճական մեծ լիցքեր են հաղորդում ստեղծագործությանը և ստեղծում են ժամանակի, տարածության բերանգ:

Гаяне Халатян, Тагуи Агасян

Исследование лексики рассказа Мушега Галшояна "Ворюга Эро"

Заключение

Ключевые слова и выражения: диалектные слова, авторский стиль, фразеологические единицы, особенности образа, заимствованные слова, осложнения.

В статье мы провели исследование разных пластов лексики повести М.Галшояна "Ворюга Эро": разговорные, диалектные слова, заимствования, вошедшие в диалекты, иностранные слова, словосочетания, различного рода усложнения, фонемы, придающие образность, эмоциональную выразительность и большие стилистические нагрузки на словарный запас. Мы рассмотрели вышеизложенное как в речи автора, так и в речи персонажей, сделав упор на персонализацию речи героев через их словарный запас.

В результате исследования сделаны следующие выводы:

1. Были вывалены особенности стиля писателя. В речи автора встречаются не только слова, относящиеся к литературному пласту, но и диалектные слова, с помощью которых он приближается к речи созданных им персонажей.

2. В речи героев повести преобладают слова, которые принадлежащие к народному и диалектному слоям. Их стилистические проявления способствуют большей выразительности образной системы произведения.
3. Многие используемые слова являются заимствованиями из других языков, таких как персидский, грузинский, турецкий, ассирийский, арабский и др. Большинство из них, долгое время употребляясь в речи, ассимилировались в языке. В работе также использовались и варваризмы. Варваризмы - это слова, взятые из другого языка или обороты речи, построенные по образцу чужого языка. Зачастую они нарушают чистоту родной речи.
4. Для персонализации речи героев, автор старается использовать различные фразы на их языке, являющиеся результатом народного мышления.
5. Правильное использование местоимений, звуков и придаточных предложений придает произведению большую стилистическую нагрузку и создает тон времени и пространства.

Gayane Khalatyan, Taguhi Aghasyan

Study on Mushegh Galshoyan's "Thief Hero" lexicon

Conclusions

Key words and expressions. dialect words, writer's style, idioms, character's personalization, loanwords, complications.

In the article, we examined different layers of the vocabulary, which gave the vocabulary imagery and expressiveness, and we examined the above mentioned in the speech of the author and characters.

1. As a result of examining the vocabulary of the story, the features of the writer's language became clear to us. We noticed that in the author's speech we find not only words belonging to the literary layer, but also dialect words, with which he approaches the speech of the characters he created.
2. In the story, the speech of the characters is dominated by words belonging to folk and dialect layers. Their stylistic manifestations contribute to the image system of the work being more impressive.
3. Many words are borrowed from other languages such as Persian, Georgian, Turkish, Assyrian, Arabic, etc. Many of them have been used in speech for a long time and have become assimilated into the language. Barbarisms were also used in the work.
4. In order to personalize the speech of the heroes, the author tried to use various idioms in their language, which are the result of national thinking.
5. True applications of vocative cases and interjections give great stylistic charges to the work and create a characteristic of time and space.

Օգտագործված գրականություն

1. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, Ե., 1926 :
2. Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, Ե., 1945:
3. Գալշոյան Մ., Մարութա սարի ամպերը, Ե., 1981:
4. Եզեկյան Լ., Հայոց լեզու, Ե., 2007:
5. Երվանդյան Ջ., Ժամանակի գեղարվեստական կերպավորումը Մուշեղ Գալշոյանի ակնարկներում, Ե., 2016:
6. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ.1-4, Ե., 1969:
7. Հայոց լեզվի բարբառային բառարան, Ե., 2004:
8. Հայրապետյան Ա., Օտար բառերի բառարան, Ե., 2011 :
9. Ղարիբյան Ա., Ռուս- հայերեն բառարան, Ե., 1977:
10. Մալխասյանց Ս., Հայերեն բացատրական բառարան, Ե., 1944,:
11. Սաղաթելյան Ռ., Բարբառային բառաշերտը արդի գրական արևելահայերենում, Ե., 2011:

Խմբագրություն է ուղարկվել 20.05.2023թ.

Հանձնարարվել է գրախոսության 05.06.2023թ.

Հրապարակման է ներկայացվել 29.09.2023թ.